սաղէմի Գրիգոր պարք. Շղթայակիրի օրով։ Վանքի մէջ ունի յիշատակներ (ՄՁ. Թ. 532)։

ՍՏԵՓԱՆ ՎՐԴ. ԹՕԳԱՏՑԻ.— Ուխտաւորութեամբ կ'այցելէ Երուսաղէմ, Պարոնտէր պարք.ի ժամանակ։

ՍՏԵՓԱՆ ՎՐԴ. ԹՕԳԱՏՑԻ.— Մբ. 1800ին։

ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ. ԹՕՄԱՃԱՆԵԱՆ, ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ.— Մբ. աւազանի անունը Կարապետ, Ծ. 1797ին. միաբան կ'արձանագրուի 1835ին. Ձռ. 1842ին. կնիքը 1842ին. ՏՑ. ՏԲ. և ՏԴ. խոստ. (1864—76). կը վախճանի 1876ին. վանուցս մատենադարանին մէջ ունի քերթուածներու տետրակ մը (անտիպ)։

ՍՏԵՓԱՆ ՎՐԴ. ԻԶՄԻՏՑԻ.— Մբ. Ձռ. 1804ին։

ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ. ԿԱԿՈՒՂՋԵՌՆ.— Այնթապցի Եղիազար կթղ.ի խնդիրներուն առիթով կ'այցելէ Ս. Յակոբի վանքը քննչական պաշտօնով։

ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ. ԿԻՄԽԻՇԽԱՆԵՑԻ.— Մբ. որդի Մարտիրոս քհ.ի. ՏՑ. Մոմնի. 1774ին Ս. Յակոբի վանքին կը նուիրէ վարդապետական զաւազան մը համաձայն հետևեալ յիշատակարանին՝ որ գրուած է նոյն գաւազանին վրայ. «Յիշատակ է այս գաւազանս կամով ... տէր Մարտիրոսի որդի Ստեփան վրդ.ին որ ետ Երուսաղէմ ի դուռն Ս. Յակոբայ երջանիկ սրբազան ընտրեալ առաքելոյն, թվին ՌՄԻԳ Յունվ. 8» (=1774) (Յուց. Պ.)։ Կը նորոգէ մոմատան մուսղուխը. ինչպէս ցոյց կուտայ նոյն մուսղուխի քարէ յիշատակարանը, որ է հետևեալը. «Ի պատրիարքութեան տն. Յովակիմայ յիշատակ է մուսղուխս մոմխանայիս Կիւմիւշխանեցի մոմնի Ստեփանոս վարդապետին և ծնողաց հոգւոյն ՌՄԻԹ» (=1780)։ Ստեփանոս վրդ. կը նորոգէ նաև Ս. Յակոբի խոհանոցին դրսի կողմի մուսղուխը 1812ին, որուն համար կը զետեղուի աս յիշատակարանը. «Յիշատակ է մուսղուխս Կիւմիւշխանեցի... Վարդ Պարոնեան տէր Մարտիրոսի որդի Ստեփանոս վարդապետին ի դուռն Ս. Յակոբայ. ՌՄԿԱ (=1812) թվին»։

ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ. ԿԻՊՐՈՍՑԻ.— Մբ. կնիքը 1789ին. Նե. Հնդկաց։

ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ. ՀԱԼԷՊՑԻ.— Մբ. 1695ին Ամդեցի Մինաս պարք.էն կ'ստանայ զաւազանի իշխանութիւն (Օրագրու-